ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԻԶԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ

Գ. Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի մարտական գործողություններն ավարտվեցին 1918 թ. աշնանը։ Սեպտեմբերի 29-ին անձնատուր եղավ Բուլղարիան, հոկտեմբերի 30-ին՝ Թուրքիան, նոյեմբերի 3-ին՝ Ավստրո-Հունգարիան, իսկ նոյեմբերի 11-ին՝ Գերմանիան։ Պարտված պետությունների հետ հաշտության պայմանագրեր մշակելու, ինչպես նաև պատերազմից հետո առկախ մնացած այլ հարցեր լուծելու նպատակով Անտանտը հրավիրեց հատուկ կոնֆերանս, որն իր աշխատանքը սկսեց Փարիզում՝ 1919 թ. հունվարի 18-ին։

Փարիզի հաշտության կոնֆերանսին Հայաստանը պաշտոնապես հրավիրված չէր։ Սակայն հանրապետության պահանջները կոնֆերանսին ներկայացնելու համար Հայաստանի Խորհուրդը 1918 թ. դեկտեմբերի 3-ին որոշեց կազմել պատվիրակություն՝ «լիազորված Հայաստանի Հանրապետության կողմից բանակցություններ վարելու և համաձայնությունների գալու ի պաշտպանություն Հայաստանի իրավունքների և շահերի»[1]։ Հայաստանի Խորհուրդը մի քանի նիստերում քննության առավ պատվիրակության կարգավիճակի հետ կապված հարցերը[2]։ Ի վերջո, պատվիրակությանը տրվող հրահանգների վերջնական ձևակերպումը թողնվեց կառավարությանը։ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1918 թ. դեկտեմբերի 7-ին հաստատեց պատվիրակության հրահանգները[3], որոնք պետք է նրա գործունեության հիմք հանդիսանային Փարիզի հաշտության կոնֆերանսում։ Պատվիրակությունը, ըստ այդ փաստաթղթի, պետք է միջոցներ ձեռնարկեր, որպեսզի նախկինում Ռուսաստանի տարածքում գտնվող հայկական շրջանները և Թուրքիայի տարածքում գտնվող հայկական վեց վիլայեթները միավորվեին և ստեղծվեր միացյալ հայկական պետություն՝ դեպի ծով ելքով։ Հայաստանը դառնալու էր մշտապես չեզոք երկիր։ Չեզոքությունն ապահովվելու էր միջազգային կայուն երաշխիքներով։ Հայաստանն ունենալու էր ներքին ինքնավարություն և քաղաքական ու ռազմական ինքնուրույնություն։ Հայաստանի անկախության ապահովման համար պատվիրակությունը պետք է հասներ մեկ կամ մի քանի պետությունների դիվանագիտական ու ռազմական պաշտպանությանը և աջակցությանը։ Պատվիրակությանը հրահանգվում էր, որ այդ պետության կամ պետությունների ընտրության հարցում, գերադասություն տրվի տարածքային ձգտումներ և ներքին քաղաքական կյանքին միջամտելու հակումներ չունեցող պետություններին։ Մեծ կարևորություն էր տրվում նաև, մինչև Հայաստանի Հանրապետության միջազգային կարգավիճակի վերջնական որոշակիացումը, այլ պետություններում դիվանագիտական ներկայացուցիչների նշանակմանը և այդ պետությունների ներկայացուցիչներին Հայաստանում ընդունելուն։ Պատվիրակությանը հանձնարարվում էր միջոցներ ձեռնարկել, որպեսզի Թուրքիան իր զորքերն անհապաղ հանի Անդրկովկասից՝ մինչև 1914 թ. սահմանները, իսկ Արևմտյան Հայաստանում՝ մտցվեն խոշոր պետություններից որևէ մեկի զորքերը՝ մինչև Հայաստանի բանակի կազմավորումը։

---

1 Հայաստանի Հանրապետության պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս 1, թ. 14։

2 Ս. Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 200։

3 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 32, թ. 1—3։

Անհրաժեշտ էր նաև պայմաններ ստեղծել, որպեսզի արևմտահայերը կարողանային անվտանգ վերադառնալ իրենց բնակավայրերը։ Պատվիրակության վրա պարտականություն էր դրվում հաշտության կոնֆերանսում հարց բարձրացնել թուրքերի կողմից գրավված վայրերում հայերի նկատմամբ գործած հանցագործությունները քննելու նպատակով խոշոր պետությունների կողմից հանձնաժողով ստեղծելու և թուրքերի կողմից պատճառված վնասները հատուցելու մասին։ Նվազ կարևոր խնդիր չէր համարվում նաև հանրապետության համար ֆինանսական միջոցների հայթայթումը։ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատվիրակությանը պարտավորեցրեց իր վրա դրված խնդիրների իրականացման գործում համագործակցել և սերտ կապեր պահպանել Փարիզում ոտնվող Հայոց Ազգային պատվիրակության հետ։ Վերջինս Փարիզ էր ուղարկվել Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V-ի կողմից և հանդիսանում էր արևմտահայության շահերի ներկայացուցիչն ու պաշտպանը Եվրոպայում։ Հայոց Ազգային պատվիրակությունը գլխավորում էր Պողոս Նուբար փաշան։

Սրանք էին այն հիմնական հրահանգները, որոնք տրվեցին Փարիզի հաշտության կոնֆերանսի աշխատանքներին մասնակցելու նպատակով Փարիզ գործուղվող Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը։ Հետագայում, կապված իրադրության փոփոխության հետ, պատվիրակությանը տրվեցին նաև այլ լիազորություններ։ Այսպես, 1919 թ. սեպտեմբերին պատվիրակությանն իրավունք վերապահվեց ինքնուրույն որոշել, թե որ պետություններում է անհրաժեշտ և նպատակահարմար հիմնել հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններ ու նշանակել ներկայացուցիչներ որոնք ներկայացնելով կառավարության վերջնական հաստատմանը[4]։

Պատվիրակությունը հաճախ ստիպված էր լինում զբաղվել նաև տնտեսական հարցերով, քանի որ Հայաստանի վիճակը շատ ծանր էր և նրա ղեկավարները խոշոր պետություններից օգնություն ստանալու մեջ ակնկալիքներ ունեին։ Տնտեսական բնույթի հարցերը հիմնականում ու պատվիրակությանը կից գործող տնտեսական հանձնաժողովի գործունեության ոլորտին էին պատկանում[5]։

Պատվիրակությունը կոլեգիալ մարմին էր՝ բաղկացած երեք լիազոր պատվիրակներից։ Նրա աշխատանքներին, ըստ անհրաժեշտության, հրավիրվում էին մասնակցելու նաև խորհրդատուներ, քարտուղարներ, գործավարներ։ Պատվիրակությունը կառավարության հետ կապը պահպանում էր արտաքին գործերի նախարարության միջոցով։ Ընթացիկ, ոչ սկզբունքային հարցերի վերաբերյալ նա որոշումներ էր ընդունում և գործում ինքնուրույնաբար, իսկ սկզբունքային հարցերի վերաբերյալ, նախքան որևէ քայլ ձեռնարկելը, պատվիրակությունը պետք է կառավարությունից ստանար կոնկրետ ցուցում։ Կապի բացակայության պատճառով վերջինիս անհնարինության դեպքում նա ղեկավարվում էր իրեն տրված ընդհանուր հրահանգներով։

Հայաստանի Հանրապետության պատվիրակության կողմից կնքվող միջպետական պայմանագրերը, համաձայն կառավարության տված հրահանգի, ստորագրում էին ինչպես պատվիրակության նախագահը, այնպես էլ, պարտադիր կերպով, մյուս երկու անդամները։

1918 թ. դեկտեմբերի սկզբին պատվիրակության ստեղծման հետ կապված կազմակերպական հարցերն արդեն լուծված էին։ Դեկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը հավատարմագիր հանձնեց պատվիրակության երեք անդամներին՝ Ա. Ահարոնյանին, Մ. Բաբաջանյանին և Հ. Օհանջանյանին, որով նրանց լիազորում էր «Հայաստանի անունից բանակցություններ վարել Եվրոպայի և Ամերիկայի պետությունների հետ... բոլոր կոնֆերանսներում և կոնգրեսներում հանդես գալ որպես Հա-

4 Նույն տեղում, ց. 1, գ. 855, մաս I, թ. 190։

5 Նույն տեղում, գ. 198, մաս II, թ. 410։

յաստանի Հանրապետության ներկայացուցիչներ և ստորագրել պաշտոնական համաձայնագրեր...»[6]։

Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը Փարիզ ժամանեց 1919 թ. փետրվարի 4-ին։ Հայոց Ազգային պատվիրակությունը նրա ժամանումն ընդունեց դժգոհությամբ։ Այդ պատվիրակության ներկայացուցիչները գտնում էին, որ հայկական հիմնահարցերը, որոնք պետք է ներկայացվեն և պաշտպանվեն հաշտության կոնֆերանսում, վերաբերում են Թուրքահայաստանին, իսկ Արարատյան հանրապետության հարցը, ինչպես նրանք անվանում էին Հայաստանի Հանրապետությունը, զուտ ռուսական հարց է։ Հայոց Ազգային պատվիրակությունը պահանջում էր, որ Հայաստանի պատվիրակությունը հեռանա ասպարեզից կամ ենթարկվի իրեն[7], իր հերթին «ՀՀ պատվիրակությունը մեկնում էր իրական փաստից. Հայաստանի Հանրապետության գոյությունը իրողություն է, Հայաստանում ապրում է մեկ միլիոն ժողովուրդ. Երևանում կա խորհրդարան, կառավարություն, բանակ. երկիրը հետզհետե կազմակերպվում է պետականորեն։ Մինչդեռ, Թուրքահայաստանը ամայի է. ո՛չ ժողովուրդ ունի, ո՛չ կառավարություն։ Հետևաբար, անհրաժեշտ է ազգային բոլոր ուժերը կենտրոնացնել Հայաստանի Հանրապետության վրա, իբրև հայկական պետության կորիզ, և հայկական հարցի լուծումը դնել Հայաստանի երկու հատվածների միացման ձևով»[8]։

Այս երկու պատվիրակությունների միջև առաջացած տարաձայնությունները թույլ չտվեցին միավորել նրանց ջանքերը՝ ընդհանուր խնդիրների լուծման նպատակով։ Չնայած երկու պատվիրակությունները համաձայնության եկան, որպեսզի Փարիզի հաշտության կոնֆերանսում անջատ քայլեր չձեռնարկեն և բոլոր փաստաթղթերը ներկայացվեն համատեղ[9], սակայն նրանց փոխհարաբերությունները մինչև վերջ էլ մնացին ոչ բարեկամական։ Երկու պատվիրակությունների միջև այդպիսի պայմանավորվածության ձեռքբերմանը շատ բանով նպաստեց այն հանգամանքը, որ հաշտության կոնֆերանսի բացման ժամանակ Պողոս Նուբար փաշան դիմել էր բոլոր դաշնակից պետություններին, որպեսզի իրեն թույլ տան մասնակցելու կոնֆերանսի աշխատանքներին՝ որպես հայ ազգի ներկայացուցիչ, սակայն այդ պետությունների ղեկավարները և, մասնավորապես, ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը պատասխանել էին, որ կոնֆերանսի աշխատանքներին կարող են մասնակցել միայն կազմավորված պետությունների ներկայացուցիչները։ Դրանից հետո Պողոս Նուբար փաշան ինքը շահագրգռվածություն հանդես բերեց երկու պատվիրակությունների գործունեության համատեղման հարցում՝ գնալով որոշ զիջումների[10]։

1919 թ. փետրվարի սկզբին երկու պատվիրակությունները ներկայացան դաշնակից պետությունների ներկայացուցիչներին՝ բանավոր հաղորդելով իրենց պահանջները։ Դաշնակիցները նրանց առաջարկեցին այդ պահանջների վերաբերյալ հաշտության կոնֆերանսին ներկայացնել գրավոր հուշագիր։ Կոնֆերանսին ներկայացվող պահանջների հարցում երկու պատվիրակությունների միջև առկա էին անհամաձայնություններ։ Դրանք վերաբերում էին, մասնավորապես, ապագա հայկական միասնյալ պետության սահմաններին։ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը, ինչպես որոշել էր կառավարությունը, պահանջում էր Արևմտյան Հայաստանի մի մասի միացում Հայաստանի Հանրապետությանը՝ դեպի ծով ելքով, իսկ Ազգային պատվիրակությունը պահանջում էր ստեղծել ծովից-ծով Հայաստան։ Ի վերջո պատվիրակությունները փոխհամաձայնության եկան և 1919 թ. փետրվարի 12-ին հաշտու-

---

6 Նույն տեղում, մաս I, թ. 18։

7 Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 274։

8 Նույն տեղում, էջ 274։

9 Ա. Ա. Եսայան, Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920—1922, Երևան, 1967, էջ 18—19։

10 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 50, թ. 2։

թյան կոնֆերանսին ներկայացրին հայկական պահանջների մասին հուշագիր։

Հայկական միացյալ պատվիրակության պահանջներն էին. «1. Ճանաչումը հայկական անկախ պետության, որ պիտի բաղկանար 1) Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սեբաստիայի, Կարինի և Տրապիզոնի 7 վիլայեթներից՝ դուրս ձգելով Տիգրիսի հարավակողմը և Օրդու-Սեբաստիա գծից գեպի արևմուտք գտնվող շրջանները. 2) Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշ, Սիս, Ջեբել-Բերեքեթ և Ադանա՝ Ալեքսանդրետով հանդերձ. 3) Կովկասի Հայկական Հանրապետությունը՝ Երևանի ամբողջ նահանգը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Ելիզավետպոլի նահանգի հարավ-արևմտյան մասը, Կարսի նահանգը՝ բացառությամբ Արդահանից հյուսիս գտնվող շրջանի։

2. Հայկական պետությունը դրվի դաշնակից պետությանց և Միացյալ Նահանգների կամ Աղգերի Լիգայի հոգատարության տակ։

3. Հաշտության Վեհաժողովի կողմից պետք է մասնավոր մանդատ տրվի պետություններից մեկին, որն իր օժանդակությամբ պիտի ընծայի Հայաստանին՝ փոխանցման մի ժամանակաշրջանի համար։ Այդ պաշտոնն ստանձնող պետության ընտրությունը պիտի լինի համախորհուրդ Հայկական Համագումարի հետ, որ այժմ գումարված է Փարիզում և որը ներկայացնում է ամբողջ հայ ազգը։ Մանդատի տևողությունը լինելու է առնվազն 20 տարով։

4. Հատուցում ջարդերի, տարագրության, հափշտակության և ավերումների պատճառած վնասների. Հայաստանը պատրաստ է իր բաժինը ստանձնելու օսմանյան նախապատերազմական պարտքից։

5. Մանդատ առնող պետությունը պետք է ստիպի Թուրքերին՝ պարպել հայկական հողերը, ձեռնարկի բնակչության ընդհանուր զինաթափություն, պատժի ջարդարարներին ու հայերի վերաբերմամբ անիրավություն գործողներին, երկրից հեռացնի կարգը խանգարող տարրերին, իրենց տեղերն ուղարկի մուհաջիրներին և այլն։ Հայկական ծագում ունեցող յուրաքանչյուր անհատ, որ հաստատվել է կամ բնիկ դարձել օտար երկրում, պետք է լինի ազատ հինգ տարվա ընթացքում ընտրելու նոր հպատակություն թե իր և թե իր անչափահաս զավակների անունով և դառնա հայ քաղաքացի՝ նախապես գրավոր կերպով տեղեկացնելով երկու երկրների ձեռնհաս իշխանություններին»[11]։

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունն իր վրա դրված խնդիրների իրականացման համար գործում էր տարբեր ձևերով՝ մասնակցում էր կոնֆերանսի նիստերին, տալիս էր ներկայացված պահանջների հիմնավորումներ, հանդիպումներ էր ունենում առանձին պետությունների ներկայացուցիչների հետ։ Պատվիրակությունը ստիպված էր լինում գործել նաև Փարիզի սահմաններից դուրս, այլ պետությունների ղեկավարների հետ բանակցություններ վարելու նպատակով ներկայացուցիչներ ուղարկելով տարբեր երկրներ[12]։ Հատկապես մեծ կարևորություն էր տրվում աշխարհի խոշոր պետությունների՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ղեկավարների հետ հանդիպումներին, քանի որ սկզբունքային հարցերում կոնֆերանսում վճռորոշ էր հենց նրանց դիրքորոշումը։ Այդ ղեկավարները պատվիրակության հետ հանդիպումների ժամանակ, ինչպես և պատերազմի ընթացքում, շարունակում էին խոստումներ տալ Հայաստանին օգնելու մասին։ Այսպես, 1919 թ. ապրիլին Ա. Ահարոնյանը, Պողոս Նուբար փաշան և պատվիրակության անդամներից ևս մեկը հանդիպում ունեցան ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի հետ, որը խոստացավ իրենից կախված ամեն ինչ անել Հայաստանի սահմանների հարցը լուծելու համար։ Նա այն կարծիքին էր, որ ստեղծ-

---

11 Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 341—342։

12 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, դ. 395, թ. 6—7։

ված հանգամանքներում խոշոր պետությունները պետք է պատասխանատու լինեն փոքր պետությունների ճակատագրի համար[13]։

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը կազմելու ժամանակ Հայաստանի խորհուրդը նրան տրամադրեց որոշակի գումար (700.000 ռ.)։ Ճիշտ է, այդ պահին անհնար էր ստույգ որոշել, թե որքան ժամանակ պետք է տևի նրա գործունեությունը և ինչ ծախսեր է կատարելու նա իր վրա դրված խնդիրները լուծելու համար, սակայն խորհուրդը գտնում էր, որ այդ գումարը կբավականացնի բոլոր անհրաժեշտ ծախսերը կատարելու համար։ Հետագայում պատվիրակությանը տրվեցին այդ գումարը տասնապատիկ գերազանցող գումարներ[14], որը պայմանավորված էր նրա գործունեության մասշտաբների ընդլայնմամբ։ Պատվիրակությանը նյութական աջակցություն էին ցույց տալիս նաև արտասահմանյան պետությունների հայկական համայնքները և անհատ անձինք[15]։ Պատվիրակության գործունեության մասշտաբների ընդլայնմամբ էր պայմանավորված նաև նրա կազմի մեծացումը։ Եթե այն ստեղծելու պահին բաղկացած էր երեք անդամից, ապա 1920 թ. նրա կազմում կային յոթ լիազոր պատվիրակներ[16]։

Ինչպես արդեն նշվեց, պատվիրակությանն իրավունք էր վերապահված նշանակել Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներ այլ պետություններում։ Այդ ներկայացուցիչները նշանակված լինելով պատվիրակության կողմից, երբեմն իրենց աշխատանքի վերաբերյալ զեկուցումներ էին ներկայացնում անմիջապես պատվիրակությանը և ոչ թե Հանրապետության կառավարությանը[17]։ Սա առաջացնում էր ավելորդ թղթաբարություն և կառավարությանը զրկում առաջին աղբյուրներից տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, քանի որ պատվիրակությունը ստացած տեղեկատվությունն ամփոփում էր և կառավարությանը հաղորդում այն, ինչն ինքն էր անհրաժեշտ համարում։ Պատվիրակության կողմից Հանրապետության կառավարությանը ներկայացվող այս բնույթի զեկուցումները ոչ պարբերաբար էին կատարվում, ինչը վերջինիս դժգոհությունն էր առաջ բերում։ Այդ պատճառով կառավարությունում անգամ առաջարկություններ էին արվում վերացնելու պատվիրակությանը տրված դիվանագիտական ներկայացուցիչներ նշանակելու իրավունքը։

Պատվիրակության աշխատանքի վրա իր բացասական ազդեցությունն էր թողնում նրա ներսում երբեմն տիրող անառողջ մթնոլորտը։ Այսպես, 1920 թ. սեպտեմբերին պատվիրակության կազմը համալրվեց նոր անդամով, որը հասնելով Փարիզ, ներկայացավ պատվիրակության նախագահին և ցանկություն հայտնեց ծանոթանալու պատվիրակության գործավարությանը, մասնակցելու վարվող բանակցություններին, սակայն պատվիրակության նախագահի կողմից չհանդիպելով փոխըմբռնման և ուշադրության՝ հրաժարական տվեց[18]։ Մինչդեռ պահը պահանջում էր համերաշխություն, գործողությունների միասնություն և դանդաղումը կարող էր շատ վնասաբեր լինել, քանի որ միջազգային ասպարեզում իրենց շահերն էին պաշտպանում նաև Հայաստանի հակառակորդները։ Մասնավորապես, Թուրքական մամուլը գտնում էր, որ անհրաժեշտ է սահմանային հարցերը հարևան անդրկովկասյան հանրապետությունների հետ լուծել նախքան դրանք քննարկումը հաշտության կոնֆերանսում, որպեսզի այնտեղ Թուրքիայի ներկայացուցիչները կարողանան հայտարարել, որ տարածքային հարցերն արդեն լուծված են և ենթակա չեն կոնֆերանսում քննարկման[19]։

---

13 Նույն տեղում, ց. 2, գ. 49, թ. 1։

14 Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 17, թ. 16, գ. 172, թ. 210։

15 Նույն տեղում, գ. 172, թ. 212։

18 Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս II, թ. 568։

17 Նույն տեղում, գ. 544, թ. 27։

18 Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 198, մաս II, թ. 28։

19 Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 41, թ. 74ա։

Սկզբնական շրջանում հայ ժողովրդի մեջ մեծ հավատ կար դեպի հաշտության կոնֆերանսը և խոշոր պետությունները։ 1919 թ. մարտի 2-ին Անդրկովկասում անգլիական զորքերի հրամանատարը Հայաստանի կառավարության նախագահին գրում էր. «Կոնֆերանսում նոր միացած կառավարությունները ի նկատի ունենալով տևական խաղաղությունը... պարտք են համարում ծանուցանել, որ ուժով ձեռք բերված տիրացումը լուրջ կերպով վնաս է բերում այդ միջոցը գործ անողների պահանջներին»[20]։ Այդ էր պատճառը, որ Անդրկովկասում խոշոր պետությունների ներկայացուցիչներն անգրկովկասյան ժողովուրդներին կոչ էին անում դադարեցնել ռազմական գործողությունները, որպեսզի «հաշտության կոնֆերանսի վրա վատ տպավորություն չթողնեն»[21]։

Հայ ժողովուրդը ամենուրեք ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի ներկայացուցիչներին ընդունում էր մեծ հավատով և ոգևորությամբ։ Երբ 1919 թ. ամռանը Հայաստան ժամանեց Փարիզի հաշտության կոնֆերանսի կողմից Հայաստանի Գերագույն Կոմիսար նշանակված Հասկելը. նրան դիմավորեց հանրապետության ողջ ղեկավարությունը, իսկ Հայաստանի Խորհրդում վերջինիս նախագահը այդ կապակցությամբ հատուկ ելույթ ունեցավ[22]։ Հավատն այնքան մեծ էր, որ 1919 թ. մայիսի 28-ին ընդունվեց «Միացյալ Հայաստանի անկախության ակտը հայտարարելու մասին» օրենքը[23]։ Սակայն Հայաստանին տրված խոստումներն ընդամենը խոստումներ էին։ Իրականում յուրաքանչյուր պետություն Հայաստանով հետաքրքրվում էր այնքանով, որքանով դա ձեռնտու էր իրեն՝ հումքի նոր աղբյուրներ որոնելու և առևտրական նպատակներով այն օգտագործելու տեսակետից։ 1919 թ. սեպտեմբերի 16-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարության ընդհանուր քարտուղարը Վրաստանում Հայաստանի դիպլոմատական ներկայացուցչին գրում էր. «Փարիզի մեր պատվիրակության գրություններից պարզվում է, որ անգլիացիք Կովկասում իրենց ներկայության ամբողջ ընթացքում եղել են ոչ անկեղծ դեպի մեզ և վարել սիստեմատիկաբար մուսուլմանական քաղաքականություն։ Պարզվել է, որ.

1) Ղարաբաղի և նրա հարակից խնդիրներում գեներալ Տոմսոնը և իր գործակիցները և հաջորդները գործել են ոչ իրենց գլխու, այլ արտաքին գործերի և զորական մինիստրությունների գիտությամբ և համաձայնությամբ։

2) Թե՛ Տոմսոնի և թե մյուս գեներալների (անգամ մեզ մոտ համարված հայասեր Բիչի) զեկուցումները, մասնավորապես Ղարաբաղի և առհասարակ մեզ վերաբերող խնդիրներում, միշտ էլ եղել են ի վնաս մեզ։

3) Անգլիան ամեն տեղ, ինչպես և Կովկասում վարում է քողարկված մուսուլմանական քաղաքականություն։

4) Ղարաբաղի վերաբերմամբ անգլիացիների որոշումը համառորեն ձգտում է այդ հայաշատ գավառը կցել Ազերբեյջանին...»[24]։

Խոշոր պետությունների խոստումների սնանկությունը հատկապես բացահայտ երևաց, երբ եկավ տրված խոստումները կատարելու ժամանակը։

1919 թ. մայիսի 14-ին Փարիզի հաշտության կոնֆերանսը որոշում ընդունեց Հայաստանի մանդատը ԱՄՆ-ին տալու մասին։ Մանդատային համակարգը կառավարման մի ձև էր, որի հասկացությունը տրվել էր Ազգերի լիգայի կանոնադրությամբ։ Դրա 22-րդ հոդվածը սահմանում էր, որ մանդատային կառավարում իրականացվում է այն գաղութների և տարածքների նկատմամբ, որոնք պատերազմի հետևանքով դադարել են լինել մինչ այդ իրենց կառավարող պետությունների տիրապետության տակ և որոնք բնակեցված են իրենց ինքնուրույն ղեկավարելու դեռևս անընդունակ ժողովուրդ-

20 Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 25, թ. 78։
21 Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 50, մաս II, թ. 273։
22 Նույն տեղում, ֆ. 198, ց. 1, գ. 30, թ. 2։
23 Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 56, թ. 15։
24 Նույն տեղում, գ. 222, թ. 2։

դով[25], երբ հաշտության կոնֆերանսը ընդունեց վերոհիշյալ որոշումը, ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը Հայաստան ուղարկեց մի հանձնախումբ՝ գեներալ Հարբորդի գլխավորությամբ՝ հրահանգավորելով. «Մենք ցանկանում ենք, որպեսզի Դուք տեղում հետաքննեք քաղաքական, ռազմական, աշխարհագրական, վարչական, տնտեսական և այլ պայմանները, որոնք կարող էին ներկայացնել իսկական հետաքրքրություն Ամերիկայի համար»[26]։ Գեներալ Հարբորդն ամփոփելով իր ուսումնասիրությունները, զեկուցագիր ներկայացրեց ԱՄՆ-ի նախագահին։ Այդ զեկուցագիրը քննարկվեց նաև ԱՄՆ-ի սենատում։ ԱՄՆ-ի ղեկավար շրջանների կարծիքն այն էր, որ իրենց երկիրը պետք է վերցնի Հայաստանի մանդատը։ Սակայն նրանք գծում էին այն Հայաստանի սահմանները, որն ընդգրկում էր մոտ 100.000 կմ² տարածք և նյութական ռեսուրսներ Սև, Կասպից և Միջերկրական ծովերը։ Այսպիսի սահմանագծմանը համաձայն չէր Անգլիան, որը ցանկանում էր ԱՄՆ-ին ուղարկել Հայաստանի մանդատը՝ նրա այդ պահին գոյություն ունեցած սահմաններում։ Անգլիան իր հերթին չէր ցանկանում վերցնել Հայաստանի մանդատը, քանի որ դա կապված էր մեծ ծախսերի հետ։ Հայաստանի մանդատի հարցն անհամաձայնությունների պատճառով ձգձգվեց մոտ մեկ տարի։ Դրան Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան նորից անդրադարձան 1920 թ. ապրիլի 19—26-ը Սան Ռեմոյում հրավիրված կոնֆերանսում։ Այդ կոնֆերանսի աշխատանքներին հրավիրված էին նաև Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի գլխավորությամբ և Հայոց Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ։ Կոնֆերանսը քննարկվող հարցի մասին ընդունեց հետևյալ որոշումը. «ա) գիտել պրեզիդենտ Վիլսոնին, որպեսզի Ամերիկայի Միացյալ Նահանգները ընդունեն Հայաստանի մանդատը այն սահմաններում, որոնք տրված են Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագծի առաջին տարբերակում.

բ) եթե ԱՄՆ-ը չկամենան ընդունել մանդատը, Միացյալ Նահանգների պրեզիդենտին խնդրվում է հանդես գալ իրեն միջնորդ Հայաստանի սահմանների հարցում...»[27]։ Այս առաջարկությունը ԱՄՆ-ում բացասական արձագանք գտավ։ Այդ մասին Վաշինգտոնում Անգլիայի դեսպանը 1920 թ. ապրիլի 26-ին գրում էր արտաքին գործերի նախարար Քեդոնին. «Միացյալ Նահանգներին Հայաստանի մանդատի առաջարկը... այստեղ կոնգրեսը և մամուլը խիստ անբարեհաճ են ընդունել...

Ընդհանրապես արտահայտված կարծիքն այն է, որ այս մանդատը քաղաքական մեծ դժվարություններ և տնտեսական պակաս առավելություններ է բերում, քան այն, ինչ վերցրել է Մեծ Բրիտանիան, և որ այդ առաջարկը նույնիսկ չպետք է քննարկվի, քանի դեռ չի զուգակցված Կ. Պոլսի և նեղուցների հսկողության հետ...»[28]։

1920 թ. հունիսի 1-ին ԱՄՆ-ի սենատը վերջնականապես մերժեց Հայաստանի մանդատի ընդունումը[29]։ ԱՄՆ-ի այդ տարիներին վարած քաղաքականության մասին ԱՄՆ-ի պետքարտուղար Չեմս Բեյքերը 1992 թ. ապրիլին Միջազգային հարաբերությունների Չիկագոյի խորհրդում ասել է հետևյալը.

«...Մենք միացանք այն պատերազմին, որ Մեծ կոչվեց, հանուն պատերազմներին վերջ տալու, պատերազմին, որ անվանեցին պարզապես առաջին համաշխարհային պատերազմ։

---

25 Международное право в избранных документах, т. II, М., 1957. с. 82—83.

26 *Б. А. Борьян*, Армения, международная дипломатия и СССР. часть II. М.-Л. 1929, с. 66.

27 *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), Երևան, 1972, էջ 669։*

28 *Նույն տեղում, էջ 672։*

29 *Հայաստանի մանդատի մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Ա. Եսայան, «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965, էջ 163—195։*

Շատ երկրների միլիոնավոր բնակիչների կյանք խլած այդ պատերազմի հետևանքով խորտակվեցին նախկին կարգերը, սակայն դրանց փոխարեն ոչինչ չստեղծվեց։ Երբ պատերազմն ավարտվեց, մարդկությունն իր հույսն ամենից առաջ կապեց ԱՄՆ-ի հետ, քանզի միայն մեր երկիրն ուներ հզորություն և բարոյական ուժ՝ կայուն խաղաղություն ապահովելու համար։ Ամերիկան առաջնորդության կոչվեց։

Սակայն մենք պատրաստ չէինք դրան։ Մեր ղեկավարները պառակտված էին։ Մեր մարդիկ ձգտում էին միայն նորմալ կյանքի վերականգնման։ Այս պատճառով մենք որոշեցինք «մի կողմ քաշվել» այլ երկրների դժբախտություններից ու դժվարություններից և հույս ունեինք դրա շնորհիվ խուսափել հետևանքային դժվարություններից...»[30]։

Ուրեմն, ԱՄՆ-ի քաղաքական գիծն էր դա, մի կողմ քաշվել ամեն ինչից և չկատարել անդամ իր տված խոստումներն այլ պետություններին, և մասնավորապես Հայաստանին։

1919 թ. հունիսի 28-ին ստորագրվեց Վերսալյան պայմանագիրը[31], որով փաստորեն ստեղծվեց Ազգերի լիգան։ Այն կոչված էր ապահովելու «կազմակերպված ժողովուրդների փոխհարաբերություններում արդարության տիրապետությունը և պայմանագրերով նախատեսվող բոլոր պարտականությունների բարեխիղճ կատարումը»[32]։ Բնական է, որ յուրաքանչյուր պետություն ցանկություն կունենար անդամակցելու այդպիսի կազմակերպության, որի կանոնադրությունը նման վեհ գաղափարներ էր հռչակում նրա ստեղծման նպատակների մասին։ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը 1920 թ. մայիսին դիմեց Ազգերի լիգային՝ որպես անդամ նրա մեջ ընդունվելու խնդրանքով[33]։ Եվ, քանի որ Ազգերի լիգայի մեջ նոր պետություն ընդունելու համար այդպիսի խնդրանքով, ինչպես պատվիրակության նախագահին պաշտոնապես տեղեկացրեց այդ կազմակերպության ներկայացուցիչը, պետք է դիմեր այդ պետության կառավարությանը, ապա պատվիրակության նախագահը դիմեց Հայաստանի կառավարությանը, որպեսզի նման խնդրագիր ուղարկվի Ազգերի Լիգային։

Հայաստանը որպես անդամ Ազգերի լիգա ընդունելու հարցն այդ կազմակերպությունում բարձրացվեց 1920 թ. նոյեմբերի վերջին՝ Հարավային Աֆրիկայի ներկայացուցիչ Սմսիլի և Ֆրանսիայի նախկին վարչապետ Վիվիանիի կողմից։ Այդ սաղին Ազգերի Լիգայում բրիտանական պատվիրակության անդամ Ֆիշերն իր կառավարությանը գրում էր. «...Վիվիանին և լորդ Ռ. Սեսիլը փորձում են Հայաստանը խցկել Լիգայի մեջ։ Պ-րն Բալֆուրը և ես մեծ կասկածանքներ ենք տածում այս բեռը Լիգայի ուսերին դնելու վերաբերյալ։ Երբ այն դրվի Ասամբլեայում, զգացմունքային հողի վրա մենք հեշտությամբ կարող ենք պարտվել ազգերի կողմից, որոնք բնավ մատ իսկ չեն շարժի Հայկական հարցի համար։ Նման հետևանքը դուք կդիտե՞ք իբրև քաղաքականորեն վնասակար։ Պատասխանեցեք խիստ շտապ»[34]։ Այս գրությունը քննարկվեց 1920 թ. դեկտեմբերի 3-ին՝ բրիտանական, ֆրանսիական և իտալական կառավարությունների Ներկայացուցիչների Լոնդոնում կայացած կոնֆերանսում։ Ներկայացուցիչներն այն կարծիքին էին, որ ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը, որին Սևրի պայմանագրով իրավունք էր վերապահվել որոշելու Հայաստանի սահմանները, առաջարկում է Հայաստանի շատ լայն սահմաններ և քանի որ Ազգերի Լիգայի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի պահանջել իր սահմանների երաշխավորությունը, ապա իրենք որպես Ազգերի Լիգայի անդամներ

---

30 Հայաստանի Հանրապետություն, 5. V. 1992։

31 Дипломатический словарь, т. I, М., 1971, с. 304—305.

32 Международное право в избранных документах, т. II, М., 1957, с. 77.

33 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 537, թ. 5։

34 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), էջ 690։

ստիպված կլինեն պաշտպանել այդ սահմանները, որոնց իրենք համաձայն չեն։ Նրանք գտնում էին նաև, որ Սևրի պայմանագրով Թուրքիան պարտավորվում էր ճանաչել Հայաստանի Հանրապետության անկախությունը, սակայն այն դեռևս վավերացված չէ Թուրքիայի կողմից և, հետևաբար, Հայաստանը դեռևս չի կարող դիտարկվել որպես անկախ պետություն[85]։ Ինչպես երևում է, այս անգամ ևս հզոր պետությունների միջև ծագած անհամաձայնություններն իրենց ազդեցությունն էին թողնում Հայաստանի ճակատագրի վրա։ Իրականում Անգլիային, Ֆրանսիային և Իտալիային մտահոգում էր այն հանգամանքը, որ ԱՄՆ-ին թույլ չտրվի ազդեցության լայն ոլորտ ձեռք բերելու այդ տարածաշրջանում։ Հիմքից զուրկ էր նաև կոնֆերանսի մասնակիցների երկրորդ փաստարկը, այսինքն այն, որ Հայաստանը չի կարող դիտվել որպես անկախ պետություն, քանի որ Թուրքիան չի վավերացրել Սևրի պայմանագիրը։ Հենց իրենք՝ Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան, դեռ 1920 թ. հունվարին էին ճանաչել Հայաստանի Հանրապետության անկախությունը։ Նրանց կողմից Հայաստանի անկախության ճանաչումն ամրագրված էր նաև իրենց հիշատակած Սևրի պայմանագրի 88 հոդվածում, որտեղ արձանագրված էր, որ «Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են դաշնակից տերությունները, որպես աղատ և անկախ պետություն»[86]։ Այսինքն, նրանք արդեն իսկ ճանաչել էին Հայաստանի անկախությունը, անկախ վերոհիշյալ պայմանագրից։ Բացի այդ, Հայաստանի անկախությունը ճանաչել էին նաև մի շարք այլ պետություններ և անիմաստ էր շեշտը դնել հատկապես Թուրքիայի վրա, որն անդամ Ազգերի Լիգայի անդամ չէր ու հասկանալի չէր նրա դերի ուռճացումը այդ հարցում։

Սակայն կոնֆերանսի մասնակիցները չէին կարող իրենց իսկական նկատառումները հայտնել Ազգերի Լիգայի սենդամներին. պետք էր գտնել որևէ այլ ձևակերպում։ Իտալական պատվիրակության նախագահը գտնում էր, որ «կարևոր է Հայաստանի բարեկամներին չվանել, որոշումը ձևակերպելով բոլորովին այլ, բայց ոչ օրինական հողի վրա»[87]։

Ի վերջո Ազգերի լիգայում բրիտանական պատվիրակությանը ուղարկվեց հետևյալ հեռագիրը. «Լոնդոնում հավաքված երեք տերություններն ներկայացուցիչները քննարկեցին Ժնևում բարձրացված Հայաստանն Ազգերի լիգա ընդունելու հարցը և միաձայն եզրակացության եկան, որ անհնար է այս պահին այդ քայլին դիմել, որովհետև Սևրի պայմանագիրը, որի համաձայն Հայաստանը կազմելու է անկախ պետություն, դեռևս վավերացված չէ։ Եվ, բացի այդ, Հայաստանի սահմանները, ինչպես դրանք հենց նոր որոշված են պրեզիդենտ Վիլսոնի կողմից ի պատասխան միջնորդության մասին առաջարկության, որ արել են տերությունները նրան, այնքան են տարածված, որ Ազգերի լիգայի մեջ մտնող տերություններն առկա պայմանների լույսի տակ դժվարությամբ կարող են իրենց վրա պատասխանատվություն վերցնել երաշխավորելու կամ պաշտպանելու դրանք։

Դուք պետք է համաձայնության գաք ձեր ֆրանսիական և իտալական կոլեգաների հետ, արդյոք վերցնել նախաձեռնություն հաղորդելու Ազգերի լիգային երեք կառավարությունների որոշումը, թե պարզապես պաշտպանել նույն տեսակետը, երբ հարցը բարձրացվի»[88]։ Եվ, քանի որ սկզբունքային հարցերում Ազգերի Լիգայում վճռորոշ նշանակություն ուներ հենց այս պետությունների դիրքորոշումը, հետևաբար Հայաստանն Ազգերի Լիգայի անդամ ընդունելու հարցը դատապարտվեց ձախողման[89]։

---

85 Նույն տեղում, էջ 687—689։

86 Նույն տեղում, էջ 676։

87 Նույն տեղում, էջ 689։

88 Նույն տեղում, էջ 691։

89 Հայաստանը Ազգերի լիգայի անդամ ընդունելու մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Ա. Եսայան, «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, էջ 133—163։

Այս պետությունների հենց այսպիսի դիրքորոշումն էր պատճառը, որ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը չէր կարողանում շոշափելի հաջողության հասնել քաղաքական հարցերում։ Ավելի արդյունավետ էին տնտեսական օգնություն ստանալու ուղղությամբ նրա գործադրած ջանքերը։

Պատվիրակության ձեռք բերած կարևոր հաղթանակն էր 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրում առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակ տարած պետությունների և Թուրքիայի միջև պայմանագրի ստորագրումը։ Հայաստանի պատվիրակությունը մասնակցեց այդ պայմանագրի մշակմանը բոլոր փուլերում՝ 1920 թ. փետրվարից սկսած, երբ Լոնդոնում դաշնակից պետությունների դեսպանների կոնֆերանս հրավիրվեց Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագծի մշակման նպատակով, և մինչև 1920 թ. ապրիլի Սան Ռեմոյի կոնֆերանսը, որտեղ հաստատվեց այդ պայմանագրի նախագիծը։

Հայաստանի Հանրապետության կողմից այդ պայմանագիրը ստորագրեց Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը։

Սևրի պայմանագրի մի ամբողջ բաժին նվիրված էր Հայաստանին վերաբերող հարաբերությունների կարգավորմանը։ Ըստ պայմանագրի, Թուրքիան ճանաչում էր Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն։ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանների վերջնական որոշումը թողնվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներին։ Ընդ որում, նրա ընդունած որոշումը պարտադիր էր պայմանագիրը ստորագրող պետությունների համար։ Իրենց իրավական կարգավորումն էին ստանում նաև Հայաստանի շահերին վերաբերող մի շարք այլ հարցեր[40]։

Ակնհայտ էր, որ Հայաստանին վերաբերող մասով այս պայմանագիրը կարող էր իրականացվել, եթե հզոր պետությունները զենքի ուժով Թուրքիային ստիպեին դա անել։ Սակայն այդ պետությունները չէին պատրաստվում զորքեր ուղարկել Հայաստան՝ ապահովելու համար Հայաստանի սահմանների անվտանգությունը և իրենց իսկ կողմից ստորագրված պայմանագրի կատարումը։ Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջն այդ կապակցությամբ ասում էր, որ մինչև հիմա ուր՛շ ազգեր են կռվել հանուն հայերի և այժմ հայերը պետք է զինվեն և անձամբ կռվեն, իսկ եթե նրանք ի վիճակի չեն պաշտպանելու իրենց սեփական սահմանները, ապա ինքը կարծում է, որ աշխարհում նման մի ժողովրդից ոչ մի օգուտ չկա և դաշնակից կառավարություններից ոչ մեկը, այս առումներով, պատրաստ չի լինի օգնելու նրանց անգամ միակ զումարտակով[41]։

ԱՄՆ-ը նույնպես չէր պատրաստվում ռազմական օգնություն ցույց տալ Հայաստանին։ Այդ մասին Թբիլիսիում ԱՄՆ-ի հյուպատոսը 1920 թվականի նոյեմբերի 6-ին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին գրում էր. «...Իմ պարտքն եմ համարում հայտարարելու, որ Միացյալ Նահանգները մասնակցություն չեն ունեցել Սևրի պայմանագրին, և որ թեպետ Միացյալ Նահանգների կառավարությունը ճանաչել է Հայկական հանրապետությունը և ցույց է տվել նրան աջակցություն, որպիսին գտել է հնարավոր, սակայն երբեք իր վրա ոչ մի պարտավորություն չի վերցրել՝ հայ ժողովրդին պաշտպանելու կամ ռազմական աջակցություն ցույց տալու իմաստով։ Ուստի և նա չի կարող իր վրա պատասխանատվություն վերցնել վերահաս ճգնաժամում»[42]։ Այս ամենին զումարվեց նաև Թուրքիայում սկսված քեմալական ազգայնական շարժումը, որը պայքար ծավալեց Սևրի պայմանագրի չեղյալ հայտարարման համար։

---

40 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), էջ 672—683։

41 Նույն տեղում, էջ 628։

42 22 ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 625, թ. 10։

Քեմալական Թուրքիան 1920 թ. սեպտեմբերին հարձակման անցավ Հայաստանի Հանրապետության վրա։ Թուրքիան պահանջեց, որպեսզի Հայաստանը հրաժարվի Սևրի պայմանագրից, հակառակ դեպքում՝ սպառնալով շարունակել գործերի առաջխաղացումը դեպի Հայաստանի խորքերը։ Ստեղծված իրավիճակում, փաստորեն, Սևրի պայմանագիրը թղթի կտորի էր վերածվել և ոչինչ չէր տալիս Հայաստանին։ Իսկ Թուրքիայի պահանջի չկատարումը կարող էր նոր կոտորածների և ավերումների հանդեցնել։ Այդ իսկ պատճառով Ալեքսանդրապոլի հայ-թուրքական կոնֆերանսում Հայաստանի պատվիրակությունը 1920 թ. նոյեմբերի վերջին արեց հետևյալ հայտարարությունը.

«Հայաստանի Հանրապետության կառավարության հաշտության պատվիրակությունը ի պատասխան Տաճկաստանի Ազգային Մեծ ժողովի կառավարության հաշտության պատվիրակության առաջին նիստին, սույն թվի 24-ն նոյեմբերի № 12 ներկայացրած գրության հայտարարում է՝

Ի նկատի ունենալով, որ Սևրի դաշնագրով խախտված է և վանդված են Տաճկաստանի կենսական իրավական շահերը ե, որ Տաճկաստանի ազգային Մեծ ժողովի կառավարությունը հայտնում և արդելում է Հայաստանի Հանրապետության ազատությունը և անկախությունը և պատրաստակամություն է ցույց տալիս իրավական ապահովություն տալ Հայաստանի բարգավաճման և տնտեսական զարգացման և յանկանալով նոր էջ բաց անել երկու պետությունների փոխհարաբերությունների մեջ և երկարատև դաշինքով բարեկամական հարաբերություններ հաստատել Տաճկաստանի և Հայաստանի միջև,— հրաժարվում է Սևրի դաշնագրից»[43]։ Անկախ այս հրաժարումից Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան արդեն իսկ քննարկում էին Սևրի պայմանագրի վերանայման հարցը, հետևաբար, եթե անգամ Հայաստանը չհրաժարվեր պայմանագրից, դա որևէ կերպ չէր կարող օգտակար լինել հանրապետությանը։

Այսպիսով, Փարիզի հաշտության կոնֆերանսի Հայաստանի պատվիրակության ջանքերը քաղաքական բնագավառում ոչ մի արդյունք չտվեցին։

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը, ինչպես արդեն նշվեց, ստեղծվել էր Փարիզի հաշտության կոնֆերանսի աշխատանքներին մասնակցելու համար։ Կոնֆերանսի պաշտոնական փակումը տեղի ունեցավ 1920 թ. հունվարի 21-ին[44], սակայն հանգամանքների բերումով այդ պատվիրակությունը հետ չկանչվեց, այլ մնաց Փարիզում՝ շարունակելու իր աշխատանքները Փարիզի հաշտության կոնֆերանսի շրջանակներից դուրս։

Սևրի պայմանագրի կնքումից հետո, գտնելով, որ պատվիրակությունը իր առաքելությունն արդեն կատարել է, Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշեց. մինչև 1920 թ. նոյեմբերի մեկը ցրել պատվիրակությունը[45]։ Սակայն պատվիրակությունը մնաց նաև Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո և դեռ որոշ ժամանակ մասնակցում էր միջազգային համաժողովներին և հանդես գալիս Հայաստանի Հանրապետության անունից, չնայած հանրապետության նոր իշխանությունները նրան չէին ճանաչում։ Այսպես, 1921 թ. փետրվարի 26-ին Լոնդոնում տեղի ունեցավ Դաշնակցային կոնֆերանս՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Թուրքիայի և Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությամբ։ Ա. Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան ներկայացնում էին համապատասխանաբար Արևելյան և Արևմտյան Հայաստանները։ Երկու պատվիրակությունները միավորվել էին Պողոս Նուբար փաշայի նախագահությամբ[46]։

Սակայն պատվիրակությունը այդ պայմաններում չէր կարող որևէ լուրջ ակնկալիքներ ունենալ և թերահավատորեն էր ընդունվում այլ պետությունների ղեկավարների կողմից, քանի որ հանդես էր գալիս այն կառավարության անունից, որն այլևս գոյություն չուներ։

---

43 ՀԱԿԱ, ֆ. 200, ց. 2, գ. 104, թ. 8։

44 Дипломатический словарь. т. II, М., 1971, с. 466—467.

45 ՀԱԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 545, թ. 33։

46 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), էջ 697—704։

ДЕЛЕГАЦИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ НА ПАРИЖСКОЙ МИРНОЙ КОНФЕРЕНЦИИ

Г. А. МАРГАРЯН

Резюме

После окончания первой мировой войны в Париже была созвана мирная конференция с целью выработки мирных договоров с побежденными державами и решения ряда вопросов, возникших на международной арене. Для участия в работе этой конференции Парламент Армении образовал делегацию, состоящую из 3-х членов. Усилиями последней на международной арене был поднят вопрос о мандате Армении, о принятии Армении в Лигу Наций. Самым существенным достижением делегации было подписание в августе 1920 г. Севрского договора. Согласно договору, Турция признала независимость Армении, границы между ними должны были определяться арбитражным решением США.